



291.99

4-47

ԱՏՈՄ ԵԱՐՃՈՆԵԱՆ  
ՄԻԱՄԱՆԹՈ

-6 NOV 2011

# ՀՈԳԵՎԱՐՔԻ ԵՒ ՅՈՅՍԻ

# ԶԱՀԵՐ

(Արիւնը եւ բարեկամութիւնը  
ամենամեծ ուժերն են):

ԷՍ.ՔՈՒԼԵՍ

Նախաբան մը  
Ռ. ԶԱՐԴԱՐԵԱՆԷ

Համազգային Տպարան  
ՓԱՐԻՉ 1907

30 JUL 2013

59997

# Ն Ա Խ Ա Բ Ա Ն

## Հ Ա Յ Գ Ն Ա Ր Ե Ր Գ Ո Ւ Թ Ի Ի Ն Ը


891.99	2223-74		
Ս-ԿՃ	Ալաւանք		
Իրոցեւթի և Խոյաթ			
Չսեւեր			
Միւր	4796	03	02 10

Այս պակուցումի, յամղմութեան, պարտասումի և խամղի գերազրգիւ օրերում մէջ՝ երբ մեր հոգիին բոլոր տաճարները լեցուած են խաչելութեան, կախաղանի մահաշուք ստուերներով ու դեռ մարտական զիւցազմերու անասամ թերափներովը. ոգորումի, սխրագործութեան, հեծեծամքի ու փառաբանութեան այս արտակարգ օրերում՝ երգիչ մը պէտք էր որ հզօր Արուեստմ ունեմար քմարերգելու մեր Գեանքին այս ամօրինակ, այս ամհաասար զիւցազմերգութիւնը:

Երգ մը՝ որ պիտի հնչեցնէր Դաշնակցութեանց ամենէն արտասովորը, ամենէն խորհրդամշանականը, ու ամենէն բարբարոսը, ու ամենէն մարգարէականը:

Մեր ազգային կեանքին խորհուրդն ու բացատրութիւնը պիտի ըլլար այդ երգը, թաթաւում տրտմութեամբ ու յափշտակութեամբ, տեսակ մի սաղմոսերգութիւն՝ սարսուռի, ամէծքի ու հրճումքի, տեսակ մը յայտնութեան մարգարէութիւն՝ որ կը բարձրանայ կոտորածներու, մախնիւրներու ծոցէն և ոտքի կը համէ զետնամած տկարութիւնները, տարփողելով Ուժին փառքը, գուշակելով յարութիւնը մշուղղ Առաւօտին:

Եւ այդ երգը վիճակուած էր Նարճամեանի: Հայ քերթողութիւնը՝ իբրև աղբիւր, ցայտելով մեր



2223-74

կեանքին կողմ՝ անհրաժեշտ էր որ կրէր մեծ ցնցու-  
մը, անհրաժեշտ էր որ մասնակից ըլլար հայ Կեանք-  
քը ալէկոծող յոյզերում, կիրքերում, իտէալներում  
ու տագնապներում:

Դատարեալ ու հարազատ Արուեստը ան է՝ որ  
Ֆայելին է ամբողջ ցեղին հոգեկամ աշխարհին: Ահա  
թէ ինչո՞ւ համար Ատոմ Եարճանեանի Ձայնը՝ աւելի  
արտայայտիչ ու ցեղային է՝ իր տրտմութեամբն ու  
իր զայրոյթովը:

Սահման մը, օրէնք մը չ'ունին իր քրթուածները՝  
արուեստի տեսակէտով, որովհետեւ ո՛չ մէկ օրէնք, ո՛չ  
մէկ կանոն պիտի կրնար ամբողջապէս ու տիրա-  
կամօրէն արտայայտել այն ամէնը՝ ինչ որ կը զգար  
այս օրերում՝ Հայուն հոգին: Նոր եմ այս քերթողու-  
թեան բոլոր տարրերը, լեզուն, բառերը, բացատրու-  
թիւնները, հիւսուածքը, բայց որոնք ամէնքն ալ սա-  
կայն կը հպատակին անտեսանելի, անսահմանելի  
մերդաշնակութեան մը, կշռութեան մը և նրբարուեստ  
զեղեցկութեան մը:

Նոյն ինքն ցեղին երազն է որ կը բոցավառի,  
ցեղին կարմիր հոգին է որ կը սաւառնի, ցեղին հա-  
ռաչն է որ կը թաւալի այս քրոնական Բանաստեղ-  
ծին քերթուածներում մէջ՝ ուր բառերն իսկ իտէա-  
կանացած են, կորսնցնելով իրենց թանձրացեալ մը-  
շանակութիւնը և եղած են այլաբանութիւններ, խոր-  
մրդապատկերներ: Այսպէս՝ տարօրինակ երևոյթ,  
յանձախ շատ մը բառեր՝ առանձին քերթուածներ են  
բիւրեղացած, որ ընդհանուր գաղափարին մաս կազ-  
մելէ առաջ՝ անջատօրէն կեանք ու խորհուրդ ունին:

Ու վայելքը այս մեհեմական քմարերգութեան՝ իր

բարձրագոյն դաշնակութեամբն ու վսեմ մեղեդիներովը՝  
սահմանուած չէ ո՛չ ամբոխին, ո՛չ հետեակ ճաշակմե-  
րուն և ո՛չ ալ ռամիկ ակամջներու, անհրաժեշտ է  
հոգիով վանկ վանկ հեզել այդ բարբառը՝ ամոնց  
խրթնագիծ քանդակին իմաստն ըմբռնելու, անհրա-  
ժեշտ է մտքի հուժկու թև մը՝ թևելու համար վսեմ  
երևակայութեան այս սաւառնումին հետ:

Ատոմ Եարճանեան ժամանակակից հայ բանաս-  
տեղծութեան մէջ առանձին դեմք մըն է, մարմնաւո-  
րելով մերկայ խորհրդապաշտութիւնն ու Նարեկացիի  
մը ուժեղ մեղմնումը:

Հայ քմարերգութիւնն է որ կը յառնէ արու զե-  
ղեցկութեամբ, և որուն կ'ունկնդրենք խոր զմայլան-  
քով և ծարաւի կարօտով:

ՌՈՒԻԲԷՆ ԶԱՐԿԱՐԵԱՆ

1906, Մայիս 12 | 25

Ֆիլիպէ

Մ Ա Ն Ո Ւ Ա Ն Տ Ե Ս Ի Լ Ք

կոտորած, կոտորած, կոտորած,  
Հայրենի քաղաքներուն մէջ և քաղաքներէն դուրս,  
Եւ բարբարոսները աւարով և արիւնով կը դառնան,  
Մեռելներուն և ոգեվարներուն վրայէն,  
Ազուաներու բազմութիւններ կ'անցնին վերերէն,  
Արիւնոտ բերաններով և գինովի քրքիչներով... :  
Յամաբաճով մը կ'իսամեռները զայրոյթով կը խղզէ  
Ու պառաւաններու անձայն ու ցաւահոծ կարաւաններ,  
Շտապով կը փախչին լայն ճամբաներէն... :  
Գիշերին մէջէն արիւններուն հոտը կը բարձրանայ  
Ծառերուն հետ շատրուաններ ուրուագծելով,  
Ու ամեն կողմէ սոսկումով կը սուրան հալածւած,  
Նախիրները հրդեհուող ցորեաններուն մէջէն...  
Փողոցներու մէջ մորթուած սերունդներ կը տեսնեմ,  
Եւ ամբոխներ անպատմելի սրածումներէ դարձող...  
Արեւագարձային տաքութիւն մը կը բարձրանայ,  
Հրդեհի տրուած ազնուական քաղաքներէն...  
Ու մարմարներու ծանրութիւնով իջնող ձիւնին տակ,  
Աւերակներուն և մեռելներուն մենութիւնը կը մտնի...  
Օ՛, մտիկ ըրէք սա՛ սայլերուն ճունչիւնը ահաւոր,

Իրենց վրայ դիզուած դիակներու ծանրութեան տակ,  
 Ու սգաւոր մարգերուն աղօթքներն արցունքոտ,  
 Որ կածանէ մը, գէպի համայնափոսերը կ'երկարին...  
 Մտիկ ըրէ՛ք հոգեվարքերուն ձայները վերջին,  
 Հովին հարուածներուն հետ որ ծառերը կը ջարդէ...  
 Օ՛, մի մօտենաք, մի մօտենաք, մի մօտենաք,  
 Չըլլայ որ մօտենաք գերեզմանոցն՝ Երուն ու ծովուն,  
 Կարմիր ջուրերուն վրայ նաւեր կը նշմարեմ հեռուն,  
 Մեռելներու կուտակումներ անոնց մէջ կան,  
 Ու ցաւէն գալարուող ալիքներուն վրայ,  
 Գանկեր ու սրունքներ ինծի կ'երևան...  
 Մտիկ ըրէ՛ք, մտիկ ըրէ՛ք, մտիկ ըրէ՛ք,  
 Փոթորիկին գոչը ծովուն աղիքներուն մէջ,  
 Կոտորա՛ծ, կոտորա՛ծ, կոտորա՛ծ...  
 Մտիկ ըրէ՛ք, մտիկ ըրէ՛ք, մտիկ ըրէ՛ք  
 Մահաձայն ունուժը զարհուրեալ շուններուն,  
 Հովիտներէն ու գերեզմաններէն ինծի հասնող,  
 Օ՛, պատուհանները փակեցէք ու աչքերնիդ ալ...  
 Կոտորա՛ծ, կոտորա՛ծ, կոտորա՛ծ...:

## Ա Ի Ե Ր Ո Ի Մ Ի Գ Ի Շ Ե Ր

Բոլոր վերաւոր ու մահաբաղձ հոգիներն, այս  
 իրիկուն,  
 Վերջալոյսին մոխրներուն վրայ յուսահատօրէն  
 հակած՝  
 Իրենց սարսափը և վերահաս աղէտքը կուլան...:  
 Ու մահերէ անմխիթար մայրեր,  
 Երիտասարդ ու շքեղ հսկաներու համար,  
 Իրենց խելակորոյս գլուխները դագաղներու բաղ-  
 խելէն,  
 Յաւիտենական ու վաղաժամ կորուստը կ'արիւ-  
 նուին...  
 Օ՛, իրիկուն ու գերեզմանն այս բոլորին,  
 Ու արիւն ու մոխիր ու արցունք մեր անզօր հո-  
 գիներուն համար...:

Ահաբեկեալ քաղաքին լոյսերը աչուրներու նման  
 կը կուրանան,  
 Ու տուններուն և հոգիներուն խորը, վտանգին և  
 գիշերուան զարհուրանքը կ'ալեկոծուի...  
 Մեռելասպաս սենեակներու մէջ, ծեր կիներ,

Ճակատագրին անողորմ ժամերէն դողգոջուն,  
 Աճապարհանքով մարտիրոսուած հերոսներու մար-  
 վինները կը պատանքեն...  
 Մինչդեռ հեռուններէն աղէխարշ ձայներ մեզի կը  
 պաղատին՝  
 »Եղբայրներ, ընկերներ, օ՛, օգնութեան հասէք,  
 բազուկներ կարկառեցէք,  
 Որովհետեւ այս գիշեր, ատելութեան և աւերումի  
 գիշեր,  
 Սրածուռներու անարդար շեփորը քաղքին վրայ  
 նորէն պիտի հնչէ...«  
 Աւ ձայները կը խղզուին ու ձայները կուլան ու  
 ձայները կը մեռնին...  
 Դեանքէն դատապարտեալ և մեռելաստուեր որբեր  
 Խելայեղօրէն գերեզմանուած մայրեր կը փնտռեն...  
 Աւ աղետաբեր մահազանգեր հրդեհուող գմբէթ-  
 ներու կատարներէն,  
 Կիսամեռներուն և մաքառողներուն վրայ անողոր-  
 մաբար կը մրկուին...  
 Եւ օրօրօցներու մէջէն պայծառ ու սրտակեղէք  
 անմեղութիւններ,  
 Հեռաւոր աստղերուն մայրութիւնը նկատելէն,  
 Ինքզինքնին և իրենց շուրջը երկաթուղ եղեռնը  
 կ'անգիտանան...  
 Աւրիշներ, իրենց երազին մէջ, Ազատութեան բա-  
 ցաստաններէն կ'անցնին,

Յոյսին Շուշանները բաղելէն, և մէկմէկու գորո-  
 վագութ՝ ժպտելով...  
 Աւրիշներ, աստուածային ջուրերուն առջև, և ա-  
 պահովութեան ապառաժներուն կռթնած՝  
 Երջանկօրէն, կենդանարար Արեգակին ծննդեանը  
 կը սպասեն...:  
 Որիշներ բարօրութեան արծաթեայ քնարը ձե-  
 ոււրնին,  
 Աւ ծաղիկներ իրենց կոյսի մազերուն մէջ և կուրծ-  
 քերնուն վրայ,  
 Կեանքին Փառքը և ապրելու Գեղեցկութիւնը կը-  
 երգեն...:  
 Աւրիշներ կարօտակէզ՝ Փրկութեան ձեռքերը համ-  
 բուրելու կը վազեն...  
 Աւ շատեր ծառերուն ու հովերուն գալարուածները  
 կ'ունկնդրեն,  
 Անոնց մէջէն օգնութեան հասնող բազուկներ և  
 շունչեր անրջելով...:  
 Բայց աւա՛ղ, երազները կը մեռնին, երազները  
 կը մօխրանան,  
 Եւ եղեռնական կէս-գիշերը և ոսկորէ Մահը եր-  
 կինքներէն վար թաւալող գերեզմաննոցի մը  
 նման...:  
 Քարուքանդ քաղաքին ու մենաւոր ու մարտիրոս  
 հոգիիս վրան կը շրջին...:

## ԹԱՂՈՒՄ

Յուսահատորէն ու պանդխտորէն անտառը վերադարձայ

Իմ վախճանած բարեկամս համբուրելու համար,  
 Աւ բոլոր եղնիկներուն ու կարապներուն հետ,  
 Ար լիճներուն ու հոգիիս ամայութիւնը կը հասկնան,  
 Թաղումը ըրինք բարեկամիս ձմրան կէսգիշերի մը  
 մէջէն...

Օ՛, իր մարմինը որչափ ծանր էր իմ կեանքէն  
 յոգնած ուսերուս համար,

Աւ Մահը որչափ հեռու է իմ այլաբաղձութիւնով  
 իրեն կարկառուող տղու աչքերէս...

Աստուծային ու անբասիր կարապները թաղումը  
 ասնեցին,

Աւ ես եղնիկներուն հետ տաժանագինորէն գե-  
 րեղմանը փորեցի:

Անտառին բոլոր ծառերը յուղարկաւորներ եղան...  
 Աւ մահուան հովը՝ անոնց անձանօթ ու երկաթեայ  
 բուրվառը...

Աւ մտաւոր ու հեռաւոր քաղաքներուն բոլոր մա-  
 հազանգերը նուիրական,

Երկարորէն, մահագուժորէն ու բարեպաշտորէն,  
 Արեւէն այրի ու ամայի գիշերին մէջ ըսին թէ՛  
 Բարեկամ մը, անտառներու եղնիկներուն ու լի-  
 ճերու կարապներուն,

Աւ երկայն ու ահաւոր ծառերուն ու հովերուն հետ,  
 Երկիւղածութիւնով իր բարեկամը կը թաղէ...:

Գիտէք թէ հեռաւոր ու մտաւոր քաղաքները բոլոր,  
 Օրերուն ու մարդերուն ոճիրներէն քանդուեցան...  
 Կարապներն ու խարտեաշ եղնիկները հովերուն մէջ  
 խեղդուեցան...

Զանգակները հին եկեղեցիներու փառքերուն հետ  
 լուեցին,

Բայց իմ հոգիս, բայց իմ խեղճ հոգիս,

Այս բոլորին թաղումներէն ու մահացումներէն  
 վիրաւոր՝

Անտառներուն սարսափին մէջը բանտարկուած մնաց...

—

## Ա Ր Ի Ի Ն

Տժգունորէն յոյսին բոլոր շուշանները թափեցան,  
Օրերուն անգթութեանը մարմարներէն ի վար,  
Մահազուժօրէն և անդադար.

Եւ արբշիւ և ուխտուած հոգիները այլևս հանեցին,  
Իրենց յաղթանակի և երազի վերարկուն երկար,  
Գերեզմանուող իրիկուններուն հետ,

Եւ աւերումի համայնապատկերին դիմաց.

Գարուններուն խենթեցնող գեղեցկութեանը տեղ,  
Տրտմութեան երկաթէ ձիւն մըն է որ կը հոսի,  
Մեր բոլորին անմխիթար որբութեանը վրայ

Եւ կարծեմ արհաւրալից ու քինայոյզ ջուհակներ,  
Հեռաւոր ու մթին արուարձանի մը մէջ այսօր,  
Աճապարանքով, բոլորը մէկէն,

Մեր սև օրերուն խոնաւ պատանքը կը հիւսեն...

Մինչդեռ անագորոյն և անարև հոկտեմբերներ,

Սառած լուսնկային հետ մինակ,

Տարիներէ ի վեր, ամե՛ն գիշեր, ամե՛ն գիշեր,

Կեանքին յուսահատութիւնը կ'անձրևեն մեր վրայ:

Աւա՛ղ, առաջ արշալոյս մը կար որ քաղցրութեամբ  
կը ծագէր.

Եւ իմ, յաւիտենական երազս երջանկօրէն

Անկէց ինձի՛ մտածումիս համար ծաղկադաշտեր  
կը յորինէր՝

Եւ պսակներ իմ բաց ճակատիս և քնարիս մանկական,  
Աւա՛ղ, առաջ արշալոյս մը կար որ բուրաստանի մը  
նման կը ծաղկէր,

Երբ անմեղութեան աւազանը հայելին էր իմ հոգիիս,  
Երբ լիճերուն եղէգները իմ շունչիս մէջէն խա-  
ղաղութիւնը կ'երգէին...

Երբ մայրական Յոյսին ստինքները յափրացումն էին  
շրթունքներուս,

Երբ ադամանդէ լուսնկան առաքեալս էր և մտա-  
ծուս ահագին:

Եւ կապոյտ խորութիւնը անրջային ջուրերուն  
Աստուածային ապարանքն էր իմ դողդոջուն և  
պատանի ստուերիս...

Բայց այսօ՛ր, բայց այսօ՛ր, ես այս ամենուն առջևէն,  
Սարսափահար և աչուըներս փակած կը փախչիմ...

Վասնզի գիտեմ որ բոլոր արշալոյսները նուիրա-  
կան հողին.

Տարիներէ՛ ի վեր, մեր արիւնէն են կարմիր...

2223-24



## ԱՓ ՄԸ ՄՈՒԽԻՐ՝ ՀԱՅՐԵՆԻ ՏՈՒՆ...

ԱԿՆԱՅ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Ա.

Աւա՛ղ, ապարանքի մը պէս մեծ էիր և շքեղ,  
 Ու ես երդիրներուդ սպիտակ կատարէն,  
 Ատղածորան գիշերներու յոյսին հետ,  
 Վարէն, ահեղավազ Եփրատին կ'ունկնդրէի...:

Բ.

Արցունքո՛վ, արցունքո՛վ լսեցի որ աւերակ, աւերակ,  
 Քու լայնանիստ պատերդ իրարու վրայ կործանեցին,  
 Սարսափի օր մը, կոտորածի օր մը, օր մը արիւնի...  
 Չքեզ եզերող պարտէզիդ ծաղկներուն վրայ:

Գ.

Ու մոխրացա՛ւ այն սենեակը կապոյտ,  
 Որուն որմերուն ետև և գորգերուն վրայ,  
 Ի՛մ երջանիկ մանկութիւնս կը հրճուէր,  
 Եւ կեանքս կաճէր և հոգիս իր թևերը կ'առնէր...:

Դ.

Փշրեցա՞ւ, ուրե՛մն, այն հայելին ոսկեծիր,  
 Որուն եթերային խորութեանը մէջ,  
 Երազներս, յոյսերս, սէրերս և կամքս կարմիր,  
 Տարիներով մտածումիս հետ, ցոլացին...:

Ե.

Ու բակին մէջ երգող աղբիւրը մեռա՞ւ,  
 Ու կոտորեցա՞ն պարտէզիս ուռին և թթենին.  
 Եւ այն առուակը որ ծառերուն մէջէն կը հոսէր,  
 Ցամբեցա՞ւ, ըսէ՛ ո՛ւրէ, ցամբեցա՞ւ, ցամբեցա՞ւ...:

Զ.

Օ՛, այն վանդակին կ'երազեմ յաճախ,  
 Որուն մէջ գորշագոյն կաքաւս, առաւօտուն,  
 Արևծագին հետ և վարդի թուփերուն դիմաց,  
 Չարթնումի ժամուս՝ յստակօրէն կը կարգճէր...:

Է.

Հայրե՛նի տուն, հաւատա՛յ որ մահէս յետոյ  
 Քու աւերակներուդ սևին վրայ, ի՛մ հոգիս,  
 Պիտի գայ, որպէս տատրակ մը տարագիր,  
 Իր դժբախտի երգը և արցունքը լալու...:

Ը.

Բայց ո՛վ պիտի բերէ, ո՛վ պիտի բերէ, ըսէ՛,  
Քու սրբազան մոխիրէդ ափ մը մոխիր,  
Մահուանս օրը, իմ տրտում դագաղիս մէջ,  
Հայրենիքս երգողի իմ աճիւնին խառնելու...:

Թ.

Ափ մը մոխիր՝ աճիւնիս հետ, Հայրենի տուն  
Ափ մը մոխիր՝ քու մոխիրէդ, ո՛վ պիտի բերէ,  
Քու յիշատակէ՛դ, քու ցաւէ՛դ, քու անցեալէ՛դ,  
Ափ մը մոխիր... իմ սրտիս վրան ցանելու...:

ՅԻՇԱՏԱԿ

Ահաւասիկ որ նոճիրներու խաւարներուն մէջ  
Ձերջալոյսի և մահաջերմի այս ժամուն  
Ազուաներու եղբրաւոր երամներ մեռելակերպ,  
Մտածումիս և վաղորդայնիս գերեզմանները կ'ող-  
բերգեն...

Եւ ի՞նչ է այդ աղաղակը զոր կողբաք՝  
Իմ գանկիս և երազներուս հսկայական որմերուն  
ետե . .

Ի՞նչ է այդ զօղանջը զոր կը հնչեցնէք,  
Ի՞նչ է այդ պատանքը զոր չորս հովերուն կ'ա-  
ռագաստէք...

Ի՞նչ է այդ արիւնը զոր ձեր բաղխումներովն կոր-  
ծանարար,

Իմ հոգիիս մէջը կը ջրվէժէք...

Եւ ի՞նչ կտցահարում և ի՞նչ խաւարչտին թեաթափ,  
Ի՞նչ փոթորիկ և ի՞նչ բազմութիւն իմ անհունի  
ներսիդիս...

Ի՞նչ մեռելախումբ անտառներու հանգոյն ոտքի՝  
Եւ դեղին հողի ի՞նչ ցնորական սրսկում...

Օ՛, փառք բեզի, ո՛վ անցեալներու Յիշատակ,  
Ահաւասիկ որ իմ առջևս կը մերկանաս,  
Ինչպէս հողին արշալոյսը փոթորիկներուն առջև.  
Բայց, կը գողգո՛ջեմ. մեղա՛յ քեզի, ով մահագուժ  
ներկայ,

Անցեալիս գեղեցկութիւնը վերապրելու ուժը կը պակասի ինծի...

Ու նորէն, երազներու ուխտուած մարմնիս վրան,  
Արիւնով թրջուած պատանքներուդ խոնաուութիւնը  
կը զգամ...

Ու չարազօր ձեռուըներ երկաթեղէն ծանրութեամբ,  
Կրժօտենա՛ն, կրժօտենա՛ն արտեանունքներս փակելու,  
Ու բազուկներս որ ատենով յաղթանակներու  
արեգակին գալարուեցան...

Այսօր ջախջախուած՝ սրտիս սէրերուն վրայ կը  
խաչաձևուիս...

Ըսէ՛ք, ընկերներ, ըսէ՛ք ո՞վ պիտի բերէ յիշա-  
տակներուս աստուածային աղբիւրներէն.

Այն բաժակ մը ջուրը կենդանարար,  
Որ հայրենացաւս պիտի ամօքէր՝ բոցավառ մահա-  
ջերմս մարելէն...

Ու խեղճ ճակատս, ի՛նչ մեծագիր երազներու աւերակ,  
Պիտի զովացնէր իմ անցեալիս աշխարհներուն  
վերերևումէն...

Օ՛հ, բաժակ մը ջուր, բաժակ մը ջուր, բաժակ մը  
ջուր,

Իմ յիշատակիս և հողիս հայրենական աղբիւրներէն,  
Վասնզի, Մահը ուսերուս վրան է այս իրիկուն,  
Ու մտիկ ըրէք, ահուաներս մահագուժօրէն կը  
կրճտեն...

## ԳԹՈՒԹԻՒՆ

Տէ՛ր հիւանդներուն և լքուածներուն սնարէն  
Ոճրագործներդ ու իրենց սուրերուն սարսափը  
հեռացօ՛ւր,

Եւ ջուրերդ թօ՛ղ քիչ մը իրենց կատաղութենէն  
հանդարտին,

Որպէսզի մահապարաները քսորանքին աւերուն մէջ,  
Թէև բեզի անիծելով, բայց գոնէ խաղաղութեամբ  
ոգեվարին...

Ես՝ թշուառներու անհամար տանիքներ գիտեմ,  
Որոնց տակ ազնուական սերունդներ բազկատարած՝  
Քու աւետարանական ու խարտեաշ ցորեանիդ,  
Ու սպիտակ ու երբեք չի հասնող գթութեանդ  
կըսպասեն...

Չարիքիդ ոգիները, ահաւասիկ, դաշտերը հրդե-  
հեցին...

Ու ահա Արիւնը Արարատին կատարները կար-  
մըրցուց...

Ու ահաւասիկ որ դժոխային մանգաղներդ ոսկիէ,  
Անմեղներու վիզերուն ի խնդիր՝ հորիզոնին մէջ կը  
գալարուին...

Մինչդեռ՝ եղբմերուդ բոլոր հրեշտակներն անդին,  
Անձրեւներէ և արեգակներէ յուռթի հողերու վրայ,  
Քու ձեռքերովդ օրհնուած ամբարներու մէջէն,  
Օ՛, անգթօրէ՛ն, անգթօրէ՛ն, անգթօրէ՛ն  
Մողախինդի և կարմիր թոյնի հունտերէ,  
Մեր բոլորին համար վաղուան մահը սերմանեցին...

## ԱՆՌՈՇԻՐԻՄԵԱՆ ԱՂԱՂԱԿ

Աւա՛ղ, աւա՛ղ, ընկեր, այն օրէն երբ բու կեանքիդ  
լոյսերը հոգիիս առջև մարեցան,

Ես իմ մեռելոցի և սև օրերու վերարկուս ու-  
սերուս վրան նետեցի,

Գերեզմանի մը պէս խոր, պատանքի մը պէս ցրախն  
և ցաւի մը պէս յաւերժական...

Եւ դողդոջուն ճակատագիրը այդ ժամէն՝ տառա-  
պանքիս առջևը ծնրադիր,

Քու մահդ և իմ օրերուս անյուսութիւնը կ'ե-  
ղերերգէ...

Յաճախ հեռաւոր ձայնդ հողին խորերէն արիւնա-  
ծաղկի մը պէս կը բարձրանայ...

Քու հերոսակերպ ուրուականիդ հետ և ասիկա՝  
խստադէմ՝ ինծի հետ կը քալէ,

Պարտուածի ձեռքերս ձեռքերուն մէջ՝ և իր բե-  
րանը իմ տրտմութեան բերանիս՝

Կը խօսի ինծի և՛ իր բառերը և՛ մթին են և զայ-  
րացկոտ և ամհհի...

— Ընկեր, խորտակէ խաչդ սա՛ թու յոգնած և  
ապաժամ քնարիդ հետ,

Եւ գլուխդ հողաթմբիս՝ մտիկ ըրէ շիրիմներէն  
հասնող աղաղակին,

Վասնզի անոնց ահեղութիւնը ամեն բան է ապ-  
րողներուդ համար...

Գիտցիր, ո՛չ մէկ յոյս կը մեռնի և ո՛չ մէկ գա-  
րուն կը թառամի այստեղ,

Ատելութեան ո՛չ մէկ ճիշ և սիրոյ ո՛չ մէկ մրմունջ  
մարած է դեռ,

Ապագայի ամե՛ն արև մեր ընդերքներուն մէջէն  
է որ թաւալելով կ'անցնի,

Եւ կեանքի ամեն գաղափար մեր արահետներէն  
է որ դէպի ձեզ կը յառնէ,

Մեր կոպերը արտասուքի տեղ զարհուրանք է որ  
կ'արտահոսեն...

Եւ մեր մոխիրին հօտը հորիզոնին մէջ թշնամիին  
մօտայուտ մահը կը ծանուցանէ,

Գիտես որ ամեն հերոս մեր վրէժին համար է որ  
կը ծնի,

Եւ ամեն ազնուագարմ՝ զոհ մեր սիրոյն համար  
կ'ոգեվարի...:

Հրաշագեղ Վասպուրականին և հպարտ Կարինին ու  
ըմբոստ Չէլթունին և Սասունին,

Բովանդակ ցասումը մեր ալքերուն մէջէն է որ ձեր  
բազուկները շարժել կուտայ...

Եւ վերջապէս ոսկետառ Պատմութիւնը մեր խա-  
ւարներէն է որ կը խօսի,

Եւ քեզ և Մարգկութեան և Գարերուն և Չարիքի  
Ճակատին...

Այստեղ է որ ձեր ապարդիւն ոսկորները օրերէն  
փշրուած պիտի գան...

Գոնէ թող հերոսներու մահուան բոցովը լուսա-  
ւորուած վար մխրձին...

Ընկե՛ր, սիրոյդ և արցունքիդ արժէքը ինչո՞վ պէտք  
էր նժարել,

Գուն որ զիս ի զուր կեանքին մէջը և ես որ մեռ-  
եալ զքեզ կ'որոնեմ գեռ,

Մ'ա այն սուրը որ օր մը իբր Խորհրդանիշը իմ  
անձնուրաց անցեալիս,

Եկար կայծակի բեկորի մը նման իմ շիրիմիս վրան  
ցցելու,

Վերցո՛ւր զայն, աջ ձեռքիդ մէջ, վստահ և ամ-  
րապինդ, վերցո՛ւր,

Եւ սուրա՛, սի՛րելիս, պերճօրէն, զուարթօրէն,  
կարիճօրէն սուրա՛,

Հոն ուր ես գաղափարիս և գաղափարիդ համար,  
առաւօտ մը, արիւնիս մէջն ինկնայ...:՝



## ՄԵՌԵԼՈՅԻ ՕՐ

Գիտէք թէ ի՞նչ սոսկումի և արիւնի հեղեղներ  
են, ո՞վ բարեկամ հոգիներ,

Որ իմ հայրենիքէ որբի և ցաւերէ սգաւորի ա-  
չուըներուս մէջը կ'արտահոսուին...

Անցեալներու ի՞նչ յիշատակ և սիրուած մեռել-  
ներու ի՞նչ ահեղաբեր յարութիւն,

Ո՛րչափ պատանքներ տխրագին ձեռքերովս կարուած  
և գերեզմաններէն դեղին,

Որ ահեղօրէն, հայրենական վրաններու պէս, ու-  
սերուս վրան կ'առագաստուին...

Ի՞նչ խորտակում դադաղներու և ի՞նչ խլրտում  
ոտքի կեցող ոսկորներու...

Եւ մանաւանդ ի՞նչ կարօտի համբոյրներ, ի՞նչ  
ողջագուրում և ի՞նչ սէր՝

Շրթնաթափ բերաններու դէմ և աւերեալ աչ-  
քերու և փշրուած կուրծքերու...

Եւ մանկութեան օրերու ինչ օրօրներ և ինչ  
գգուանք, ինչ խոստում և ինչ հրաւէր

Որ այս առաւօտ, մեռելոցի օր, երկրիս մեռելները  
մահազանգերու շունչերովը ինձի կ'ուղղեն...:

Եւ ահաւասիկ մահազանգերն են, աղէտաւոր մա-  
հազանգերը գիշերուան մէջ,

Եւ իրենց խենթութիւնը և կոչը և քրքիջը և  
հարուածը որ մտածումիս կը կառչին...

Եւ ահաւասիկ իրենց երկաթաքայլ հովը հին  
մահերը վերստին գուժող,

Եւ ահաւասիկ աւերակներուն հողը և ցաւերու  
մոխիրն որ անապատ առ անապատ,

Ամեն մէկ ղողանջէ, աւազակոյտերու նման հորի-  
զանները կ'ալեկոծեն...

Եւ ագռաւներու արիւնաթաթախ թւեր պատե-  
րուս վրան կը մահաժպին,

Անգղի երամներու հետ իրենց բերաններէն նո-  
րածիւններ և գլուխներ առկախ...

Ու հեծկլտանք և վրէժի ահեղագոչ ձայն և սիրոյ  
մրմունջ և ատելութեան որոտմունք,

Եւ գերեզմանի հող և խաչերու փշրանք և դամ-  
բանաքարեր,

Հողերէն իրարու ետևէ յանկարծօրէն յառնող  
տեսիլքներու հետ...

Եւ ահա ինչ որ՝ կմախքէ բերաններն այս առաւօտ  
մոլեգնաբար որոտացին...

— Եղբա՛յր, զաւա՛կ, ընկե՛ր, ոտքի կեցի՛ր այսօր  
անօգուտ վերյուշումներու օր.

Հեռացո՛ւր քու յուսահատ ձեռքերդ սա՛ ճակա-  
տիդ վաղանցուկ խորհուրդներէն,

Եւ բարկութեամբ մտիկ ըրէ սա՛ աւերեալ քա-  
ղաքներուն որոնք իրենց անվրէժ՝

Հեծեծանքի և աղօթքի ստրկական ղողանջները  
իրարու կը փոխանցեն...:

Ոտքի՛ կեցիր, երազներդ կոխոտելով և աչքերդ  
հրավառելէն, ոտքի՛

Ու ձեռքովդ յափշտակէ բոլոր շղթաները այդ  
սև զանգերուն,

Եւ բազուկներուդ բոլոր թափովը փոթորկէ անոնց  
երկաթները Թշնամիին վրայ...

Քու վրէժիդ հեղեղին և ատելութեանդ մռնչիւնին  
զօրութեանը համեմատ,

Վասնզի և մեռելներս և ողջերդ, արցունքի տեղ,  
այսուհետև՝

Միշտ քինաշարժ և անդադրում՝ մրրկումի պէտք  
ունինք...

## ԱՐԻԻՆ Է ՈՐ ԿԸ ՏԵՍՆԵՄ...

Մոռացումներու մոխիրին մէջն է որ զքեզ պատանքեցի,

Ո՛վ երկբայելի, եսանուէր ու սնտոի Սէր,  
Եւ չի հաճեցայ հիւսել խարտեաշ եղէգներէն ո՛չ  
դափնի և ո՛չ պսակ,

Ու ո՛չ ալ դողդոջ երգ մը, քեզի համար, իմ  
ազատածուփի բնարէս...

Ո՛չ ալ զքեզ գեռ երգեցի, ո՛վ երկինքներու ան-  
դորրական կապոյտ,

Ո՛չ ալ զքեզ՝ Արեգակ, զօրութիւն, կեանքի և  
աճուսի ովկէան,

Ո՛չ ալ զքեզ՝ Արևելք, աստուածներու և քուր-  
մերու ծննդավայր,

Պատմութեանց կոթող, իմաստութեան խորութիւն  
և վայելքի խորան...

Ո՛չ ալ ձեզ՝ Արևմուտքի իտէապաշտ Ոստաններ,  
ուր Մեծերը կը ծնանին...

Ո՛չ ալ զձեզ, մեհնական անտառներ և փլատա-  
կուող բարկութիւնք սարսափահար ծովերու...

Եւ վարդակարմիր և հոլանի և անբասիր առաւօտ,  
կամ ոսկիներու իրիկուն, մեռելական աշնանամուտ  
և անապատի անեղրութիւն...

Իսկ օր մըն ալ երազիս մէջ, Գերթողահայր մը  
ինձի ըսաւ.

— Կը հասկնամ ես քու ցաւդ, վասնզի, ես ալ  
կեանքէն եկայ անցայ...

„Չաւա՛կ՝ և գիտես որ իմ քնարիս պարտէզներէն  
վարդի թերթեր հոսեցուցի...

„Եւ տարփաւորներն անոնց բուրմունքէն գիշեր-  
ներով գինովցան,

„Բայց ծաղիկները դօսացան, ինչպէս մեռաւ իմ  
աշունս ալ մեծափառ...

„Ես գինին երգեցի իր ոսկեվառ բաժակին մէջ  
հրակալայկ,

„Եւ պլպուլին հայրենացաւը տաւիղիս թելերէն  
սրտիս մէջը կաթկթեց...

„Խունկեր մատուցի՝ մօլեգնօրէն պաշտուած աս-  
տուածներու պառուանդանին,

„Եւ տառապանքս մոռնալու համար, կերպարանքս  
մոխիրով պատեցի...

„Մարմինն ձևերն երգեցի, գերեզմանէն սերած և  
գերեզմանին ընծայ,

„Ու ծնրադիր պաղատեցայ և դողացի շրթունքի մը  
և երկու աչքերու առջև...

„Արցունքը երգեցի, վերջապէս, հոգիներէ յորդող  
և նայուածքներու հեծեծանք,

„Եւ որ մը այսպէս մեռայ Հեղգութիւնս ձեր բո-  
լորին բաժին ձգած...“

Բայց բու գերեզմանէդ ի վեր, քերթողահայր,  
բսի, հերոսութիւններու օրեր հասան,

Ուրբերուս տակ աւերակներ եմ տեսած, և լու-  
սամուտէս դուրս հազարաւոր մեռցուածներ...

Եւ սուրեր շողացին... ձգեցէ՛ք զիս, ո՛վ տկարու-  
թեան կապանքներ, դեռ սուրեր կը շողան,

Եւ բանաստեղծի աչուրներս, արի՛ւն, արի՛ւն, արի՛ւն  
է որ կը տեսնեն...:



### ՅՈԳՆՈՒԹԻՒՆ

Օ՛ դէպի խաւարներն ու Մոռացումը քալէ՛,  
Ո՛վ յոգնած ու դանդաղ ու ծանր ուխտաւոր,  
Աղբիւրներու սա պայծառ տղուն հետ առանձին.  
Ան հոնտեղերը մարմարէ մեհեաններ գիտե,  
Ուր հինաւուրց աստուածները՝ ազնուօրէն զօրաւոր,  
Քու յոգնութիւնդ կը հասկնան...

Ու մարդկօրէն անոր մեծ ցաւը կ'ապրին...:  
Աւա՛ղ, մինչև ե՛րբ մեր մարմինները տարփաւոր  
Այսչափ տենդոտօրէն պիտի գալարուին...  
Դէպ ի փայտէ դագաղները դարաւոր՝  
Յաւիտենական ու ապարդիւն կեանքին,  
Վերջապէս իրիկուն մը մխրձելու համար...

— Թէև այնչա՛փ չարաշուքօրէն —

Արհաւիրքով լեցուն բայց փրկարար ծոցը հողին  
Գիտեմ սքեմիդ մէջի վանականի իրանդ ոսկիէ,  
Շատ ապրած Աստուածի մը խոնջէնքն ունի.

Ուրեմն եկո՛ւր ս'ա խարտեաշ ու խորունկ ու լուռ  
ու մերկ հարսերէն լեցուած

Մեր գինիի նուիրական սափօրը ա՛լ վար դնենք,  
Թէև ան մեր երգերուն խենթութիւնը կ'ըլլար...

Ու այն բոլոր արշալոյսէ ծաղիկները որ քաղցեցինք,  
Անկարելի պաշտամունքին համար...

Այս բոլորը ձգենք, մեր կուրծքերուն ադամանդէ  
խաչերուն հետ,

Ո՛վ բարեկամ ու բաղդակից ու հոյակապ քրմապետ,

Այնպէս չէ՛, ես ալ այս բոլորը ճանչցայ,

Քեզի հետ այնչափ ապարդիւնօրէն,

Իմ սիրահար տղու խօլաթե իրիկուններերուս մէջէն,

Յոգնած և արիւնոտ ճակատիս դիմաց, անհունօրէն,  
առյաւէտ...:

Ու արդէն աւազներու մոգերն աստղերուն տակ  
ըսին թէ,

Հողին բոլոր գինիները ա՛լ մոլեխինդ պիտի ըլլան...

Ու բոլոր կապոյտ շուշաններն ալ ձեր Յոյսի ծաղ-  
կանոցին,

Ամէնը մէկ, յանկարծօրէն ագռաւներոյ պիտի  
փոխուին...:

Ու յետոյ գիտես որ բոլոր օձերը փեթակներուն տակ,  
Մեզի համար այն սև անձրևներէն ի վեր, հիմակ,  
Մահազուժօրէն վաղուան մեղրը կը պատրաստեն...

Ու դեռ կարծեմ թէ գետնափորներուն մէջ է որ,  
Բոլոր բրուտները, մեռելներու հողերէն,

Ո՞ր ժամանակէ՛ն ապրողներուն համար մինչև այսօր,  
Ջուրի կուժեր կը շինեն...

Ու այն լամբարը որով Յնորբը կը հսկենք, մեր  
կտաւէ վրանին տակ,

Ահաւասի՛կ քեզի կ'ըսեմ, Արշալոյսէն դեռ շատ  
շատ առաջ պիտի մարի...:

Օ՛, թե՛ղ թե՛իս անցո՛ւր ու խարխափելէն քալէ՛,  
Ո՛վ ծանր ու դանդաղ ու յոգնած ուխտաւոր,  
Որովհետև վաղորդայնը անգթօրէն սուտ է...


Ու մեր զգայախարի ոտուրներն ալ յոգնած,  
Կեանքին մինչև Իրիկունները երթալու համար...

Դէպ ի խաւարն ու Մոռացումը թափանցէ՛,  
Ջուրերու երիտասարդ զաւկին հետ առանձին,  
Ու բու տարագիր ճամբորդի տառապանքդ բոլոր,  
Ու այն աղջամուղջի դարերը զոր օրերը ուսերուդ  
վրայ յարկեցին...

Այդ բոլորը ամէնը մէկ ինձի տուր...

Ու միսիդ պատանքներն ալ հոգիիս վրան նետէ...  
Թե՛ղ թե՛ին անցուր ու քալէ, Յաւին հետ հայրօրէն.

Անոր վիրաւոր եղնիկի աչուրներն իմաստուն,  
Կեանքին բոլոր ճամբաները գիտեն...



## ՀԱՅՐԵՆԻ ԱՂԲԻԻՐ

Արշալոյսիս և Յոյսիս օրերուն էր որ զքեզ ապ-  
րեցայ,

Ո՛վ հայրենի և քաղցրահամ աղբիւր,  
Եւ քու լուսավառ ձայնդ դեռ ինձի կը խօսի,  
Իմ յոգնածի և յուսահատի ուղեղիս մէջէն...

Քու ադամանդեայ վազքդ յորդառատ,  
Հոգիիս խաւարչտին աւերակներուն վրայ,  
Այսչափ ատենէ ի վեր յիշատակներս ու անցեալս  
կուլայ...:

Չեմ մոռցած զքեզ, ո՛վ, հեռաւոր ու եղբայրա-  
կան աղբիւր,

Կը յիշեմ՝ երբ կուգայի թրջել քու ջուրիդ խոր-  
հուրդներուն առջև,

Իմ երջանիկ տղու աչուրներս ու ճակատս պայծառ՝  
Եւ դուն գորովագութ՝ ազատութեան մտածումին  
նման,

Իմ արևս ու կեանքս ու հոգիս կը քաղցրացնէիր..  
Երբ իմ թևերս դեռ չէին կոտրած սա՛ յուսու-  
հատութեան ապառաժներէն,

Երբ նայուածքներս ուրախութենէ կը փակէի,

Երազուած յաղթանակներու արեգակին ի տես...:  
Չեմ մոռցած այն առուակը ոսկիէ մամուռով  
Որ քու երգիդ հոսանքին առջև կ'ակօսուէր,  
Եւ ես մանկական քայլերովս՝ երազելէն՝  
Իրեն ճամբէն տարափանքով ու գինովութեամբ  
կ'երթայի,

Ինչպէս կ'երթան անոնք որ սպասուած Յոյսին  
կ'ուզեն հասնիլ...:

Բայց դեռ կը հոսի՞ս արդեօք, ո՛վ հայրենի աղբիւր,  
Այնչափ յստակ, որչափ էր, Արշալոյսն իմ անցեալիս,  
Գեռ վճի՞տ են արդեօք սա ջուրերդ հին օրերու,  
Եւ քու ձայնդ դեռ ե՞րբ մըն է թէ աղաղակ մը  
վրէժի...:

Եւ չեկա՞ն արդեօք, ըսէ՛ չեկա՞ն, մեր արհաւիրքի  
օրերուն մէջ,

Գառնացնելու քու պայծառութիւնդ ադամանդէ,  
Իմիններուս անմեղ արիւնէն՝ քանի մը կաթիլ արիւն,  
Որոնց հոսանքներէն, աւա՛ղ, աւա՛ղ, իմ խեղճ  
մտածուսս պարտուածի,

Սուգէ ու սարսուռէ ու սարսափէ, անբուժե՛լի-  
օրէն խենթացաւ...:

## ԱՐՅՈՒՆՔՆԵՐՍ

„Եւ ասէին, Զի՛ք քերթոյին այսօր սուգ...“

Խորէն Արեւսպա. ՆԱՐՊԷՅ

## Ա.

Եւ յաբրաթեւ երազիս հետ մինակ էի, հովիտ-  
ներուն մէջ հայրենի,

Քայլերս էին թեթեւ ինչպէս բայլերը խարտիշա-  
գեղ եղնիկին,

Եւ զուարթութեամբ կը վազէի, կապոյտէն և օրերէն  
բոլորովին գինով,

Աչքերս ոսկիով և յոյսով՝ և հոգիս աստուած-  
ներով լեցուն...

## Բ.

Եւ ահա բարեբեր Ամառն իր պտուղները զամ-  
բիւղ առ զամբիւղ,

Մեր պարտէզին ծառերէն դէպի հողը և դէպի  
զիս կ'ընծայէր,

Եւ ես լուրթեամբ՝ գէղուղէշ ուռիին ներդաշնակ  
հասակէն,

Երգերս ստեղծելու համար խորհրդաւոր սրինգիս  
ճիւղը կը կտրէի...

## Գ.

Կ'երգէի... Աղամանդեայ առուակն և թռչուններն  
հայրենագեղ.

Աստուածային աղբիւրներուն յստակահոս մեղե-  
դիներն անդադրում,

Եւ առաւօտեան զեփիւռը, բրոջական գորովներու  
այնչափ նման,

Այս բոլորը իմ երջանիկ երգերուս թոթովումին  
կը ձայնակցէին...

## Դ.

Այս գիշեր երազիս մէջ, ձեռքս առի զքեզ, ո՛վ  
քաղցրախօս Սրինգ,

Շրթունքներս զքեզ ճանչցան՝ ինչպէս համբոյր մը  
հին օրերու,

Բայց շունչս՝ յիշատակներու զարթնումէն, յան-  
կարծօրէն մեռաւ,

Եւ երգիս սեղ՝ շիթ առ շիթ, շիթ առ շիթ,  
արցունքներս էին որ ինկան վար....

## Ձեռ-Քերթ Ինք Երկամուր...

Իմաստութեան և խորհուրդներու շքեղ լամբարս  
մինչև այսօր,

Մատեններու և թիւերու մշուշին մէջ,  
Եւ ճակատիս ու հոգիիս յոգնութեանը հանդէպ՝  
Եղբա՛յր, մինչև այսօր, կ'ըսեմ, իր մահը միայն  
վառեց...:

Ու ձեռքս այրեցաւ մտածումիս անբերրի կրակէն,  
Ու նպատակիս ճանապարհն անհունորէն անհու-  
նացաւ...:

Ըմբոստի կամքս պայքարին սարսափէն կը մոխրանայ՝  
Եղբա՛յր, և այն երգումը զոր արեծագի մը մէջէն  
քեզի մըմնջեցի,

Թամանակին յաւերժական շրջանին երկաթէ  
օրէնքէն,

Սկսաւ, տերև առ տերև, կեանքիս աշունին հետ,  
դէպի հողը թափել...

Ինծի կարկառէ ձեռքդ, և ուղղէ՛ նայուածքդ տա-  
ռապագին նայուածքիս,

Երկարէ՛ ձեռքդ, որպէսզի զօրաւորի երակներուդ  
արիւնը կարմիր,

Իմ օտարացեալի արիւնս գոնէ կայծով մը գար-  
նանացնէ...

Ես գիտեմ որ սիրտս քու սրտիդ եղբայրօրէն  
պիտի խօսի,

Երբ նայուածքներդ գան իմ նայուածքներուս մէջ՝  
Նախկին բարեկամի մեր կորուսեալ ժպիտները  
փնտռելու:

Եւ գիտեմ թէ, ի՞նչ է ցետիւր և ի՞նչ է Ոսկին,  
Սարուկներուն օրօրօցն է և անկողինը և դագաղն  
է այն,

Եւ Ոսկին՝ ըմբոսաներուն և մեծերուն գահն է,  
Եւ հոգին է, և օրուան հացը, և բաժակին ջուրը  
և պսակն անոնց ճակատին...

Ձեռքերդ ի՛նձ երկարէ՛, դեռ իմիններս անպիղծ են՝  
Եւ եկո՛ւ որպէսզի նայուածք նայուածքի դէմ,  
Ես՝ ի քեզ՝ հերոսը սքանչանամ Հայրենիքին նուի-  
րուած,

Եւ դուն՝ քնարիս մրրկաթե լարերէն, թերևս  
ճանչնաս,

Այն հին օրերու ընկերը, որ Յեղիս և ձեր բո-  
լորին անչափելի ցաւէրէն,

Փորձեց՝ բարկութեան և ընդվզումի պղինձները  
հնչեցնել...:



## ԽԱԻԱՐ

Ձիծուորեալ ըմկերոջ մը

Ու ես պիտի մեկնիմ՝ տրտմութեանս և ստուերիս  
հետ մենաւոր,

Արշալոյսի մը կամ վերջալոյսի մը արիւններու  
ժամուն,

Իմ ատելութենէ ու սէրէ ու ընդվզումէ ամ-  
բօխեալ հոգիս՝

Անոնց յոյսի լոյսերէն վերջին անգամ մըն ալ  
թրջելով...

Ու բեզի կը ձգեմ, ո՛վ հերոսական ընկեր և  
մտածումի եղբայր,

Այն մետաքսէ ծիրանագոյն վերարկուս երկար,  
Որուն ծալքերուն մէջ իմ տառապանքս և ըմ-  
բոստացումս կարմիր՝

Օրերով ու խաւարներով ապարդիւնօրէն պտտցուցի...  
Եւ սա՛ լուսեղէն առուակին բովը պիտի դնեմ՝

քեզի համար,  
Իմ կաղնիէ ցուպս հաստատուն և դարերու աւանդ՝

Որ տարիներով յոգնութիւնս ինծի հետ, ճամբա-  
ներուն վրայ,

Եղբօր մը պէս և բարեկամի մը նման բաժնեց,...  
Եւ ահաւասի՛կ խաղողի ոսկեղէն ողկոյզ մը ծան-  
րակշիռ,

Հայրենական այգիներուս արևներուն տակ հա-  
սունցած...

Եւ ահաւասի՛կ հողիս խարտեաշ ցորեանէն բաժին  
մը հաց,

Որ ծաղկազարդ զամբիւղիս մէջն այսօր,  
Երազիս անտառներուն քով, ջուրին եզերքը դրի...

Եւ ահաւասի՛կ դեռ եբենոսէ անվարժ քնարս  
աղմկայոյզ,

Որ պարտութենէս, օր մը իմ դողդոջուն ձեռքե-  
րուս մէջ ջախջախուեցաւ...

Եւ ահաւասի՛կ վերջապէս բեզի՝ իմ վաղնջական  
սուրս պողպատեայ,

Որովհետև իմ յաղթուածի բազուկներս անար-  
ժան ե՛ն անոր բոցին,

Ահաւասի՛կ որ թշնամիներու արիւնին ծարաւէն,  
մինչև այսօր,

Իր ոսկիէ պատեանին մէջ կատաղութենէն կը  
կայծկլտայ...

Եւ դո՛ւն ընկե՛ր, արդէն գիտես արիաբար քալել՝  
Մեծ նպատակին այն ազատաբեր ճամբաներէն.

Ուրկէ քու երկաթեղէն քայլերդ, հազարաւորներու  
քայլերուն հետ,

Յաղթանակներու խոստացուած հնչիւնը պիտի  
հնչեցնեն...

Բայց, եկ'ու, և ահաւասիկ ինչ որ քեզմէ կը խնդրեմ,  
Եկ'ու և քու բարեկամի ու սիրուածի մատուցնե-  
րովդ գորովածանր,

Այն երկու կաթիլ լոյսը որոնք աչուքներս յոյսով  
և հպարտութիւնով կ'ազամանդեն,

Եկ'ու զանոնք յաւերժութեան մը համար դէպի  
Խաւարը փակելու...

Որովհետև, Յոյսին ձայնէն՝ ինչպէս ձայնէն Փրկու-  
թեան, կամ ձայնէն Տառապանքին...

Կրնայ ըլլալ որ, իմ մեռեալի աչուքներս նորէն  
արցունքոտին...:

## ԾԱՐԱԻ

Ա.

Հոգիս վերջալոյսին մահը մտիկ կ'ընէ,  
Չարչարանքի հեռաւոր հողին վրայ ծնւադիր,  
Հոգիս վերջալոյսին ու հողին վէրքերը կը խմէ...  
Եւ իր մէջ, դեռ իր արցունքին անձրևուժը կը զգայ...

Բ.

Ու ջարդուած կեանքերուն աստղերը համակ՝  
Աւրուած աչուքներու այնչափ նման,  
Սրտիս աւազաններուն մէջն այս իրիկուն՝  
Յուսահատութենէ՝ սպասումէ՝ կ'ոգեվարին...

Գ.

Ու բոլոր մեռածներուն ուրուականներն այս գիշեր,  
Աչքերուս և հոգիիս հետ Արշալոյսը պիտի սպասեն...  
Որպէսզի, կեանքերնուն ծարաւը յագեցնելու համար՝  
Թերևս վերէն իրենց վրայ՝ կաթիլ մը լոյս իյնայ...:

## ԵՍ ԵՐԳԵԼՈՎ ԿՈՒՉԵՄ ՄԵՌՆԻԼ...

ԸՈԿԵՐՈՂ ՄՂ յԻՉԱՏԱԿԻՍ ԲԱՄԱՐ

Ա.

Սպասուժիս և Յոյսիս բաղցրութեանը հետ, մինակ էի այդ իրիկուն,

Եւ Փրկութեան ու Տառապանքի նժարովը՝ Հայրենիքին բախտը կը կշռէի...

Երբ՝ հեռակայ տանս դուռը, գիշերուան սարսափին մէջէն, ուժգնապէս բաղխեցին.

Եւ ժպտուն՝ ընկեր մը ներս մտաւ, շքեղօրէն գեղեցիկ, եղբայրադէմ և ահաւոր...:

Բ.

Երիտասարդ էր: Աչուճներուն կայծը, երկնքի աստղերէն էր որ կը ծորէր,

Եւ հասակին ձևերը մարմարներու զօրութիւններէն էր կերտուած...

Մտամուժը մարդկային արդարութեան էջերէն յստակօրէն ջահափառեալ...

Ճակտին վրայ իրենց ցաւի և բարութեան ծաղկներն ունէին:

Գ.

Մտերմաբար քովքովի, Հայրենիքին տառապանքէն կը խօսէինք,

Իր ծանրախոհ գլուխը սգաւոր կիսաստուածիմը արիւնոտ սրտին կը նմանէր...

Նայուածքները նայուածքներուս մէջ, նոյն ճակատագրին խորհրդանիշը փնտոեցին...

Եւ մեր տրտում ժպիտները հոգիէ հոգի մեղմօրէն ճառագայթուեցան:

Դ.

Ժամերով լռին էր: Լռին էի: Յիշատակի հեծեծանքներ մեր աչքերը թրչեցին...

Եւ լամբարիս կապոյտ լոյսը, սեղանիս վրան, այլևս արիւններու նման վար կը թորար...

Տժգունեցայ ես՝ ինչպէս երազ մը որ առաւօտին երևումէն կ'անհետի...

Բայց ինք՝ հերոսատիպ և հպարտ, ձեռքս ձեռքին մէջ՝ ոտքի՝ ինձի ըսաւ...:

Ե.

— «Այս իրիկուն՝ հաւատքի և հրաժեշտի իրիկունս է, ընկե՛ր,

Երիվարս թամբած եմ արդէն՝ և կեանքի ու կուրի տենդէն՝ դուռիդ առջևը կը վրնջէ...

Եւ տե՛ս հասակէս վար անբիժ սուրս մերկ է,  
մերկութեամբը գերմարդկային վճիռներուն:  
Ճակատդ շրթունքիս մօտեցո՛ւր... հաւատքի և հրա-  
ժեշտի իրիկունս է, ընկե՛ր:

## Գ.

»Եւ դուն սա՛ մաքրափայլ թերթերուդ վրան,  
ցեղին ցաւը և ցեղին ուժը բանաստեղծէ,  
Ապագայ սերունդներուն և մեր անցեալին տխրու-  
թեանն ի նուէր.

Ես որք մընեմ և ըմբոստ մը, մնաս բարե՛աւ, կորու-  
սեալներս փնտռելո՛ւ կերթամ...

Քու երգերէդ երգ մը տո՛ւր ինձ, երգ մը, ես  
երգելով կուզեմ մեռնիլ...»

## ՅՈՅՍԻՆ ՀԱՄԱՐ

## Ա.

Գաղափարներու ո՞ր հովիտներէն պիտի գաս և  
ե՞րբ պիտի լուսնաս, ո՛վ Յոյս,

Ե՞րբ, որպէսզի ես ալ իմ երկու ձեռքերս, կա-  
րօտէն ու սպասուժէն դողդոջուն,

Արշալոյսիդ քրքումներուն երկարեմ, կեա՛նք պա-  
ղատողի մը պէս, երկարե՛մ...

Անոնց հոսանքին առջև, իմ ազատութեան առա-  
ջին նայուածքս բանալու համար:

## Բ.

Եւ ի՛նչ ծովօրէն խոր յուզում պիտի թափես մեր  
հոգիներուն աշխարհներէն ներս,

Ի՛նչ կնճիռներ պիտի ջնջուին մեր վշտակոծ ու  
տժգունած այտերէն,

Որչա՛փ ժպիտ պիտի ծաղկի, հրեշտակօրէ՛ն, ո՞ր-  
չափ ժպիտ մեր աչքերուն մէջ,

Որչա՛փ հառաչ պիտի մեռնի, որչա՛փ արիւն, և,  
որչափ արցունք պիտի ցամքին...:

Գ.

Մոխիրներու հողը ծաղկաստան մը պիտի դառնայ,  
 գրախտային և անթառամ,  
 եւ բազմահազար աղբիւրները, իրենց հեծեծանքը՝  
 հովիւներուն հետ՝ երգերու պիտի փոխեն,  
 Սեւ անձրեւներուն տեղ՝ հայրենի աստղերէն կա-  
 պոյտ եթերն է որ վար պիտի թորայ,  
 եւ գառնուկներ պիտի ծնին՝ առուակին եզերքը  
 և մարմանդներուն վրայ...:

Դ.

Գեղուհիներու է՛ն գեղանին քու բղանցբիդ առջև  
 իր թունկը և իր ծաղիկը պիտի թափէ,  
 եւ կեղծիքին տաճարները պիտի քանդենք՝ քու  
 Տաճարդ կերտելու համար.  
 Փայտէ այրի ցեղը վերջապէս կանանչ պիտի հագ-  
 նի, և դառնասիրտ թշանին՝ սև...  
 եւ գերեզմաննոցները, մեր բայլերուն տակ, կմախքի  
 անտառներ, դանդաղօրէն պիտի շարժին...:

Ե.

Երազուն ճակատիս համար՝ ամառուան տերևանքէն  
 պսակներ պիտի յօրինեմ,  
 եւ ծիածանէ՛ վերարկուս, հովերուն հետ, ուտե-  
 րուս վրայ, արծուի մը պէս պիտի ծփայ...:

Ու եբենոսէ սրինգս՝ շունչիս կամ գեղաքանդակ  
 քնարս՝ ձեռքս առած,  
 Ոսկիէ դաշխուրանէս, աստուածներու գինիէն՝ գի-  
 նի՛, գինի՛, գինի՛ պիտի ըմպեմ...:

Զ.

Եւ յետոյ ես՝ ցնծութեան և Յոյսերու կարմիր  
 քահարր, կռապաշտօրէն պիտի վառեմ...  
 եւ անտառներուն համանուագը, քու փառքիդ  
 համար մըրիկներ պիտի երգէ,  
 Սուրերը, մեր ծունկերուն դիմաց կոտորակէն, արիւ-  
 նոս կամ անբիծ, անցեալին պիտի նետենք,  
 եւ Հայ զինուորին պղինձէ շեփորը պիտի պատուի՝  
 յաղթանակի Ռազմերգին որոտուէն...:

## ՍՈՒՐԻՍ ԿԱՅԾԵՐՈՒՆ ԱՌՁԵՒ

Անցեալ, անցեալ և իր օրերն և իր արևն ան-  
դորրութեան,

Երբ դահլիճին կապոյտ պատերէն, տիրականօրէն  
առկախ,

Քու պաշտպանի հպարտ նայուածքներովդ ազա-  
մանդէ,

Իմ մանկական հոգիս յոյսով կը ծորէիր, երկիւղ-  
ներս հալածելէն:

Նախնիքներէս մինչև ինձ քու շողիւններդ ահա  
կ'երկարին,

Ո՛վ իշխանական, ահաւոր, ճշմարիտ և բարեկամ  
Սուր,

Ու սնարիս, երազներուս և կեանքիս երջանկու-  
թեանցը մէջէն,

Միշտ մահավճիռը գտած եմ քեզ դարանկալ  
ոճիրին...:

Եւ կը սիրեմ զքեզ, դուն՝ Արդարութիւն և  
Բարբարոս,

Դո՛ւն, որուն կայծկլտուքը սոսկում մըն է և  
խրախոյս մը միանգամայն,

Դո՛ւն որուն, ժանգը անքաւելի պարտութիւն մը  
ամօթաբեր,

Դո՛ւն որուն դադարը ստրկացում մըն է զքեզ  
պաշտող ձեռքերուն...:

Թէև քու ոսկեքանդակ պատեանդ արտացոլու՞մ  
է կեանքիդ,

Բայց դուն մերկութեանդ մէջ միայն կրնաս աս-  
տուածօրէն գեղեցկանալ...

Պատեանէդ դո՛ւրս միայն քու ծարաւդ կը յա-  
գենայ և ցասումդ կ'ամորի...

Անկէց դո՛ւրս միայն քու տիրողդ ճակատը պիտի  
կրնայիր պսակել...:

Եւ այսպէս մերկ՝ ինչպէս հիմա, իմ դողբողուն  
և զայրացկոտ ձեռքերուս մէջն յաճախ,

Քու լուութեան կայծերովդ երգերուն է՛ն յաղ-  
թականը կ'երգես,

Եւ շարժումէդ և շունչէդ և շողիւնէդ ահաւա-  
սի՛կ որ դուրս կը ժայթքի,

Եւ կռիւին քարոզը, ազատութեան բուրմունքը և  
փառքը կարիճ մարդուն...:

Բայց խորհուրդաւոր սուսեր, զարհուրանքով կը  
տեսնեմ որ այլևս կ'ատես զիս,

Այսօր մահուան և կեանքի օր, հարուածի և  
վրէժի և պատիժներու օր,

Եւ երբ քու կայծակնակերպ հասակդ շրթունքներուս  
կը տանիմ կամ ձեռքովս քեզ կը շոյեմ...

Բարկութեանդ կայծերը, աչքերուս մէջէն, նզովք-  
ներուն էն ահեղը ինձ կ'ուղղեն...:

Մեղա՛յ, մեղա՛յ և ըսէ՛ ի՞նչ գրերով է գրուած իմ  
ճակատագիրս քու ճշմարտութեանդ վրան,

Արդեօք ստրուկի՞ թէ յաղթողի արիւնս է որ  
քու վրագ պիտի ցոլայ...

Թէ հայրենիքին անիծապարտ թշնամիներուն սև  
արիւնն է որ պիտի վազէ,

Քու բերանէդ դար վար, աղբիւրներու նման և  
յորդահոսան...:

Մերկացի՛ր, մերկացի՛ր, մերկացի՛ր, օրերուն Օրն  
է ո՛վ իմ սուրս աղիաւոր...:



## ԱՍՊԵՏԻՆ ԵՐԳԸ

Ա.

Աբէն ելաւ, երիվար և մեկնումի ժամն է այս,  
Սպասէ՛ որ ոտքս անցնեմ՝ ասպանդակէդ շողարձակ,  
Աչքերուդ մէջն իմաստուն՝ Նպատակս կը կարգամ՝,  
Օ՛հ, ինչ ցնծութիւն ցնծութիւնս, օրհնեա՛լ ըլլաս  
երիվար...

Բ.

Երիտասարդ իրանս դեռ թեթեւ է և ճկուն,  
Վարաւանդիդ վրան ես՝ արծուի մը պէս պիտի թառիմ...  
Եւ սոկեզարին զոր ես քեզի, առատօրէն ջամբեցի,  
Մարմնայդ մէջը հրավառեց կենդանութիւն մը խօլաթեւ:

Գ.

Միշտ քառարշաւ պիտի սուրաս ո՛վ երիվար,  
Եւ պղծէ պայտերէդ կայծեր են որ պիտի ծաղկին,  
Ու մեր վազքը թո՛ղ զմեզ հերոսներու պէս արբեցնէ-  
Ու հո՛վ խմենք, հովուն նման անհունօրէն թեւաւոր:

Դ.

Անջբպետն անծայրածիր թուիչիդ առջև կը մեռնի,  
Ու քաղաքներն մեղաւոր քայլերուդ տակը կը խոնարհին,  
Ագաւաններու սև երամներ քու հոռանքէդ դողահար,  
Ամպերուն մէջ, ամպերուն մէջը կ'ապաստանուին:

Ե.

Կարծես վարն է տրտում՝ հողը ու մենք վերն ենք  
աստղերուն հետ.

Պուն ո՛չ անդունդ կը ճանչնաս ո՛չ առապար,  
Արգելք չի կայ, խուժ չի կայ քու արշաւդ կասեցնող,  
Եւ անհամբեր՝ նպատակին կատարներուն կուգես կառչիլ:

Զ.

Երիվարս արագասոյր, ո՛վ իմ՝ կուռքս մարմարեղէն,  
Գիտես որ ես զքեզ հոգեվի՛ն է որ կը պաշտեմ,  
Գաղափարիս բոցերէն երազկոտ ճակատս կայրի՛...  
Նպատակիս նետէ՛ զիս, ես քայլերուդ գե՛րին եմ:

Է.

Ես քայլերուդ գե՛րին եմ ո՛վ դուն՝ որդիդ մըրիկներու,  
Արագաթուխէ երիվար, քինախնդիր՝ պէտք է սուրա՛ս,  
Ես ապարդիւն դադարը ցասումներովս կ'ատեմ,  
Կատարները մեզի են և յաղթապսակը քուկդ է...:

Ը.

Քու կաթնաթոյր մարմինդ կեանքիդ կրակէն կեռայ,  
Եւ քու ազիդ ջրվէժ մըն է, գաւակէդ վար մըրկահոս,  
Աչքերուդ մէջն երկու, բռնկած աստղեր կը շողան,  
Ու պայտերուդ դուրջմը զարհուրանքէ որ կը կուանէ:

Թ.

Քեզի ըսի որ ես քու ազատածարաւ գերին եմ,  
Սա սահմանէն դէպի հարաւ երազաբա՛ր հասցուր զիս,  
Արարատին փառքերէն, Արագածէն ալ անդին,  
Մենք արեւներ պիտի հագնինք և արի՛ւններ սուրա՛ դուն:

Ժ.

Մտրակ չունիմ՝ ձեռքերուս մէջն, ազա՛տ ես դուն,  
Ես միմիայն լանչքիդ վրան շուշանափայլ,  
Մտուռներուս քաղցրութիւնն է որ կը թափեմ,  
Մեղրերու պէս՝ միսիդ վրան յորգահոս:

ԺԱ.

Ո՛չ սանձ ունիս ո՛չ երասուն երախիդ,  
Առատ բաշէդ ալի՛ք մը վարս ձեռքերուս մէջ՝ կը բաւէ,  
Ռտուռներս զքեզ գրկիդ ասպանդակի պէտք չունին,  
Միայն թամբդ է վրադ, արծաթ թամբդ մարգարտահետ:

ԺԲ.

Ես հայրենի հովիտներուն կարօ՛տն ունիմ, կարօ՛տն ունիմ,  
Բայց աստղածոր երկնքին տակ կանգ մի՛ առներ երիվար,  
Քարայրներուն առջևէն ստուերի մը պէս պէտք է՝ անցնիս,  
Անտառներէն, հնձաններէն, այգիներէն ալ անդին:

ԺԳ.

Եւ ո՛վ գիտէ, թերևս, գեղուհի մը, պուրակի մը եզերքէն,  
Ոսկի ողկոյզ մը և սափորով՝ ումպ մը գինի մատուցանէ.  
Թերևս հոգիս հասկնայ և քրոջ մը պէս ինձի ժպտի...  
Բայց չե՛մ ուզեր ես երազել, կանգ մի՛ առներ, երիվար:

ԺԴ.

Ծննդավայրիս գրախտային ծմակներէն պիտի անցնիս,  
Պլպուռին խօ՛սքը, պլպուռին խօ՛սքը կուզէի խմել...  
Վարդին բուրմուռը տարինե՛ր պանդխտորէն երազեցի...  
Կարօ՛տ ունիմ, կարօ՛տ, բայց մի՛ կենար, կանգ մի՛ առներ:

## ԺԵ.

Ճամբուս վրայ թերևս հին մեռելներ ոտքի ելլեն.  
Իրենց պատանքը ուսերնուն և ձեռքերնին ինձ երկարուող,  
Ու մօտենան տառապեալիս՝ տկանջէս վար փսփսալու,  
Իրենց սէրերն և վրէժնին անմուաց, բայց մի՛ կենար  
երկվար:

## ԺԶ.

Ես կը սոսկամ աւերակներէն և անկարող ցաւերէն,  
Կանգ մի՛ առնե՛ր քաղաքներու մոխրին քով,  
Օ՛, արցունքը ուրիշին արցունքը զիս անգթօրէն կը խղզէ,  
Ուրիշին ցաւը, ուրիշին կոծը զիս խենթութեան կը տանի:

## ԺԷ.

Օ՛, կանգ մի առնե՛ր, սա դիակներուն դէմ ցիրուցան,  
Հեռու փախի՛ր գերեզմաններէն և սպիտակ շիրիմներէն,  
Որովհետեւ ինձի համար, կարելի չէ, քեզի կըսե՛մ երկվար,  
Հայրենիքիս մահացումը, մահուանը մէջ անգամ մըն ալ  
սեւեռել:

## ԺԸ.

Ահաւասի՛կ բնութիւնը ուր ես օր մը ծնեցայ,  
Թարթիչներս կը թրչուին արտասուքի կաթիլներով,  
Բայց չե՛մ ուզեր զանոնք թափել, կանգ մի՛ առնե՛ր՝  
Սրաթուռի երկվար, նպատակս տկարութիւն չի՛ ճանչնար:

## ԺԹ.

Ահաւասիկ Եփրատին ձայնը, ի՛նչ կարոտաս ո՛վ Եփրատ,  
Քու գաւազէ է քովէդ անցնողը, ինչո՞ւ ջրերդ մթին են,  
Քու որդիդ եմ, մոռացա՞ր զիս, մի՛ մըրկիր, մոռացա՞ր զիս,  
Ես քեզի հետ կուզեմ սուրալ, ալիքնե՛րդ կոտորէ՛...:

## Ի.

Օ՛, մանկութեանս իշտատակն է որ կ'արիւնիմ ես հիժայ,  
Պարմանի մը երազկոտ ավերուող վրայ թափառուն,  
Յոյսով զեղուն, արևով խենթ՝ և անուրջով երջանիկ,  
Բայց ինչ կըսեմ... կանգ մի՛ առնե՛ր լուսաթուռի երկվար:

## ԻԱ.

Տե՛ս շքեղ աշունը, որ շուրջներնիս տարտամօրէն կը մեռնի,  
Ահաւասի՛կ դեղին տերև մը ձակտիս վրան ինկաւ վար,  
Խորհրդա՞նիչն է մահուանս թէ պսակումը հաւաքքիս  
Բայց ի՛նչ փոյթ մեզ, կանգ մի առնե՛ր, և վրնջէ Եփ-  
րատին հետ սուրալէն:

## ԻԲ.

Թերևս վերջին տերևն էր ժանտատեսիլ ձակատագրին,  
Որ մեր վրան ինկաւ վար, բայց ի՛նչ փոյթ մեզ՝ կանգ  
մի առնե՛ր,  
Ընկերներս հողին ծագերէն այս խօսքն է որ կը կրկնեն...  
„Կանգ մի՛ առնե՛ր, կանգ մի առնե՛ր ազատարշաւ  
Գաղափար“

## ԻԳ.

Ա՛հ կը պաշտե՛մ ես զքեզ, ահաւասի՛կ որ աստեղօրէն  
կը թռչիս,  
Կայծակին չափ արագ ես և անոր չափ ալ օգտաս,  
Հովին մէջէն հովին հետ, արծիւներ ենք ձախրի մէջ,  
Ես ասպետդ եմ և գերիդ, նպատակիս բարձրացո՛ւր զիս:

ԻԴ.

Ապուռածին կատարներէն ամեհօրէն ամպամած,  
Տե՛ս ջրվեժները, ջրվեժները վար կը նետուին,  
Մարմինիդ պէս անդայտ է անոնց յորձանքն սպիտակ  
Եւ վազըիդ պէս բարբարոս իրենց էջքը տիրական:

ԻԵ.

Բայց ինչո՞ւ քու մարմինդ, մարմնոյ տակը սարսուաց.  
Ի՞նչ կայ ըսէ՛, ո՛վ գիւցազուն, ինչո՞ւ համար մւայլեցար,  
Ա՛հ, աչուրներդ ինձմէ դարցո՛ւր, յուզեալ աչքերդ  
Հեռացո՛ւր,  
Հորիզոններ միայն կտրէ՛, կը պաղատի՛մ, երիվար...

ԻԶ.

Աղերսանքներ ես իմացայ, լաց ու կոծեր ու ողբեր,  
Խրճիթներէ, փլատակէ, քաղաքներէ մեզ հասնող,  
Բայց ի՛նչ օգուտ ցաւին առջև անգործէն կանգ առնել,  
Միայն պէտք է փրկել զանի. կանգ մի՛ առներ երիվար:

ԻԷ.

Հոգեվարքին մէջէն անցանք, աչուրներնիս անարցունք,  
Սրտազինուէ՛, երիվար, կանգ մի՛ առներ, մի՛ առներ,  
Այսուհետեւ ես Յոյսին Զասերն է որ պիտի վառեմ,  
Գազարը մա՛հ է մեզ համար, կանգ մի՛ առներ երիվար...

ԻԸ.

Ես լսեցի քառասմբակ շքեղ մարմնիդ կատարէն,  
Որ կայծարձակ պայտերդ, մեր վազքին մէջն մինչև այսօր,  
Քա՛նի անգամ, քա՛նի անգամ ոսկորներ էր որ փշրեցին,  
Եւ բաց կոպերը գանկերուն ինձ նայեցան, տեսա՞ր դուն...

ԻԹ.

Ես լսեցի քեզի կըսեմ, երկաթներէդ՝ ճարճատիւնը  
կմախքներու,  
Բայց լռեցի: Ես անխօս եմ: Կանգ մի՛ առներ, երիվար,  
Հոգիիս մէջ հեծեծանքս ես կը թաղեմ՝ անդնդախոր,  
Թո՛ղ զայրոյթս միայն ապրի՛՝ կանգ մի առներ երիվար:

Լ.

Մի վարանի՛ր ո՛վ սպիտակ բարբարոս մարմարեայ,  
Կեանքին ցաւը արցունքով չէ՛ որ կանհետի,  
Խտեալը պիտի հնչէ՛, պիտի հնչէ՛ իտեալը իր զանգերն  
ցատումի,  
Կուռկները մեզ պիտի կանչեն, անոնց երգին հետեւի՛ր...

ԼԱ.

Բայց ո՞ւր է ճամբադ, ի՞նչ է այս, ցնորեցա՞ր ո՛վ նժոյգդ,  
Ա՛հ, մոխիրներն են, մոխրադաշտե՛ր, աւերակներն են  
ասոնք,  
Մշուշին պէս գորշ փոշին մեր շունչերը կըսպառէ,  
Ճեղքէ՛ անցիր, զարհուրանքի այս լեռներն, ճեղքէ՛  
անցիր, երիվար:

ԼԲ.

Օ՛, վե՛ր առ ճակատդ, վե՛ր աչքերդ որ ձեռքովս  
փակե՛մ զանոնք,  
Կանգ մի՛ առներ, կտրմի՛րն է, կտրմի՛րն է, կտրմի՛րն  
ասեղ Արիւնին...  
Ես իմ դլխիս ծածանող վարշամակս վա՛ր քաշեցի...  
Կանգ մի՛ առներ, ի՛նչ օգուտ կար մեր անօգուտ հա-  
ռաչէն:

14.

Իմ՝ քնարս ցաւերուս հետ ժամանակով արի՛ւն լացաւ,  
Այսուհետեւ լացը կատե՛մ, դուն ես միայն իմ՝ Ոգին,  
Փառապանծ ես և մարտաշունչ, ես իշխանդ եմ և գերիդ,  
Քու ձևերդ էր որ պաշտուեցաւ Ելլադայի փառքերէն...:

17.

Հովին ձայնը շեփորմըն է որ կը հնչէ հեռուներէն,  
Անառնները սօքի ելան պատերազմի վաշտերու պէս,  
Գռոյթիդ տակ կատաղի, հին յոյսերն իբր հսկաներ  
կը զարթնուն...  
Հին օրէնքը կը փշրէ՛, հին արցունքը կը թափի՛ հին  
ձայները կը մեռնին...:

18.

Լուսածագին՝ վազքիդ մէջ, լեռնադաշտի մը վրայ,  
Նո՛ր ըմբոսներ պիտի տեսնենք, նո՛ր հսկաներ, նոր  
հերոսներ,  
Որդիները տառապանքին, որ թշնամութեան այս դա-  
րուն հետ,  
Արիւնին մէջ են ծնած, և անոր մէջ զայրացած և ա-  
րիւնո՛վ կուզեն մեռնիլ:

19.

Եւ երբ տեսնենք ծովացուժը մրրկազէն վաշտերուն,  
Անոնց հետ է որ պիտի քալենք Նպատակին ճանա-  
պարհէն...  
Եւ ես փա՛ռքը պիտի երգեմ և պսակուժը մարտիկ-  
ներուն,  
Զի բամբուս պիտի հնչէ և ջահերս ալ պիտի վառին:

15.

Օ՛, արշալոյսը ծաղկեցաւ, ես ասպետդ եմ և գերիդ,  
Զառիվերը դժուարին է բայց հազադ հողմաշունչ,  
Պետք է՝ թռչիլ ճիգ մըն ալ հուրերուն հետ առաւօտին,  
Կանգ մի՛ առներ, ես ծարա՛ւ եմ ինչպէս և դուն  
յաղթութեան:

16.

Տրափիւն մ'ալվերջին ցայտ մ'ալ գերի՛դ եմ ես,  
Տե՛ս ի՛նչ թիւ է ի՛նչ թափօր, ի՛նչ երջանի՛կ զօրութիւն,  
Ազատութեան բաճիկներն, սուրբրոմբին կենտառոյ,  
Առաւօտին լոյսերուն մէջ Եղբայրութիւնը կը տօնեն...:

17.

Կանգ առ այստեղ... և օրհնեա՛լ ըլլաս, աստուած վա-  
յել երկվար,  
Իտէալին ի տես մտածումս և հոգիս արցունքներով  
ծանրացան...  
Յաղթանակը մեծ օրէնքն է անկշռելի գեղեցկութեան:  
Ահաւասի՛կ հո՛ն, վեց դարերն՝ մուսլորէն հրազինուած:

18.

Պիտի զքեզ ասպազինեմ: Ես զինուեցայ: Զուհս ուտի՛  
կը վառի,  
Փոթորկի պէս քալել կուզեն: Արդարութեամբ բեռ-  
նաւոր՝  
Արշալոյսին հուրերուն տակ՝ Հողը մե՛րկ է և ծարա՛ւ  
Եւ մեր վազքէն հսկայ Յոյսն է որ իր շանթերը  
պիտի ցանէ...:



Handwritten signature in red ink.

Նախաբան.— Հայ քնարերգուքինը—  
Ռուբէն Զարդարեան

I

Մահուան տեսիլք . . . . .	9
Աւերուածի գիշեր . . . . .	11
Քաղում . . . . .	14
Արիւն . . . . .	16
Ափ մը մոխիր հայրենի տուն . . . . .	18
Յիշատակ . . . . .	21
Գրուբիւն . . . . .	23
Անդրշիրիմեան աղաղակ . . . . .	25
Մեռելոցի օր . . . . .	27
Արիւն է որ կը տեսնեմ . . . . .	30
Յօգնութիւն . . . . .	33
Հայրենի աղբիւր . . . . .	36
Արցունքներս . . . . .	38
Ձեռքերդ ինձ երկարէ . . . . .	40
Խաւար . . . . .	42
Ծարաւ . . . . .	45
Ես երգելով կ'ուզեմ մեռնիլ . . . . .	46
Յոյսին համար . . . . .	49
Սուրիս կայծերուն առջև . . . . .	52
Ասպետին երգը . . . . .	55

~ ~ ~

«Ազգային գրադարան



NL0362764

54.997

891.99

U-47